ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«04» 08 2015թ.

# Հ Ր Ա Մ Ա Ն

N 126-Հ/3

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻ ԱՎԱՆԴԻ ՀԱՄԱՐ» ՈՍԿԵ ՄԵԴԱԼՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N 1294-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 14-րդ կետի 4-րդ ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

Շինարարի տոնի կապակցությամբ և քաղաքաշինության բնագավառում ներդրած ավանդի համար ներքոհիշյալ անձանց պարգևատրել Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինության բնագավառում նշանակալի ավանդի համար» ոսկե մեդալով և համապատասխան վկայագրով.

| | | |
|---|---|---|
| 1. | Վահան Միխայիլի Հարությունյան | «Միկմետալ» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն |
| 2. | Դավիթ Հրաչիկի Կլեկչյան | «Բետոն» արտադրական կոոպերատիվի նախագահ |
| 3. | Ռուբեն Կարենի Շահմուրադյան | «Կոմֆորտ Ռ և Վ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն |

ՆԱԽԱՐԱՐ՝ Ն.ՍԱՐԳՍՅԱՆ

«04» 08 2015թ.
ք. Երևան